ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի վերաբերյալ տեղեկություններ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

2012 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության գնդապետ Մանուկ Սեմերջյանը (էլ. փոստ՝ manuksemerghyan@mail.ru):

Ամբիոնի դոցենտների պաշտոնները զբաղեցնում են ոստիկանության գնդապետ Ալեքսանդր Սահակյանը և ոստիկանության փոխգնդապետ Բենիամին Ալեքսանյանը:

Ամբիոնի ավագ դասախոսների պաշտոնները զբաղեցնում են ոստիկանության փոխգնդապետներ Վահագն Սարդարյանը և Հայկ Կուծանյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը թափուր է:

Ամբիոնի ուսումնական ասիստենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության ավագ լեյտենանտ Ալիսա Սմբատյանը:

Ամբիոնի կաբինետի պետի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության ավագ լեյտենանտ Արթուր Գրիգորյանը:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, ամբիոնին կից գիտական խմբակի գործունեության կազմակերպումը, կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2020-2021 ուսումնական տարում ամբիոնի դասախոսական անձնակազմը ղեկավարում է մագիստրատուրայի 5 մագիստրոսների մագիստրոսական թեզերը:

2012-2021 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է 6 ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, 16 գիտական հոդվածներ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնում դասավանդվում են հետևյալ առարկաները.

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն
2. Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքները
3. Գաղտնիության ռեժիմ և գաղտնի գործավարություն
4. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում

5. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները ՀՀ-ում
6. Կրիմինալիստիկա
7. Կրիմինալիստիկական մարտավարություն և տեխնոլոգիա
8. Դատական փորձաքննություն
9. Դատական հետքաբանություն
10. Դատական հոգեբուժություն
11. Դատական բժշկություն
12. Դեպքի վայրի զննություն
13. Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն
14. Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը
15. Ընտանիքում բռնություն և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը

ՕՀԳ և քրեագիտության ամբիոն